# ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# «ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## ՀԿ առաքելությունը՝

Նպաստել հասարակության հոգևոր, մտավոր և մասնագիտական ներուժի շարունակական զարգացմանը՝ միավորելով ու համախմբելով ցկյանս ուսումնառության, մասնավորապես՝ մեծահասակների կրթության (ՑՈՒ/ՄԿ) ոլորտում շահագրգիռ կողմերին, արդյունավետ օգտագործելով նրանց ներուժը:

## ՀԿ տեսիլը՝

Լինել հասարակության կայուն զարգացման, ցկյանս ուսումնառության և մեծահասակների կրթության քաղաքականության ձևավորման ու դրա կենսագործման վրա էական ազդեցություն ունեցող կառույց:

## ՀԿ գործունեության նպատակները, խնդիրներն ու գործողությունները՝

### ՆՊԱՏԱԿ 1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՑՈՒ/ՄԿ ԴԵՐԻ ՄԵԾԱՑՈՒՄ ՈՒ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

**Խնդիր 1.1. ՑՈՒ և ՄԿ գաղափարախոսությունը և քաղաքականությունը հասու դարձնել լայն հասարակությանը.**

1.1.1. Մշակել ՑՈՒ/ՄԿ գաղափարախոսության և քաղաքականությունը տարածման հայեցակարգ,

1.1.2. Համագործակցություն հաստատել ԶԼՄ-երի հետ՝ նրանց միջոցով ՑՈՒ/ՄԿ վերաբերյալ պատշաճ հասարակական կարծիք ձևավորելու նպատակով,

1.1.3. Կազմակերպել և իրականացնել ՑՈՒ/ՄԿ ոլորտում որոշում ընդունողների կարողությունների զարգացման միջոցառումներ,

1.1.4. վ վերաբերյալ հատուկ դասընթացներ անցկացնել նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում,

1.1.5. Ստեղծել և տարածել ՑՈՒ/ՄԿ ոլորտի գիտական ու հանրամատչելի պարբերականներ,

1.1.6. Ստեղծել ՀԿ կայքէջ՝ ՀԿ, վերաբերյալ տեղեկատվություն տարածելու նպատակով,

1.1.7. Կազմակերպել և իրականացնել ՑՈՒ/ՄԿ վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝

ամենամյա ՄԿ շաբաթներ, քարոզարշավներ ՀՀ մարզերում, աշխատանքի տոնավաճառներ, խորհրդաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ և այլն,

1.1.8. Կազմակերպել մրցույթներ ՑՈՒ/ՄԿ հարցերը լուսաբանող թեմաներով:

**Խնդիր 1.2. Մասնակցել ՑՈՒ և ՄԿ քաղաքականության մշակմանը.**

1.2.1. Կազմակերպել և իրականացնել Հայաստանում ՑՈՒ/ՄԿ քաղաքականության ու ռազմավարությանը վերաբերող փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում՝ ըստ պատկանելվույն,

1.2.2. Համագործակցություն հաստատել պետական կառավարման համապատասխան մարմինների հետ,

1.2.3. Ձևավորել ՑՈՒ/ՄԿ ոլորտի փորձագիտական խորհուրդ:

**Խնդիր 1.3. Խթանել ՑՈՒ/ՄԿ ոլորտի բարեփոխումները և մասնակցել դրանց իրականացմանը.**

1.3.1. Իրականացնել ՑՈՒ/ՄԿ վերաբերյալ քաղաքականությանը և ռազմավարությանը վերաբերող փաստաթղթերի և իրավական ակտերի ընդունման լոբբինգ,

1.3.2. Ստեղծել և տարածել հատուկ և գիտամեթոդական նյութեր, ձեռնարկներ, ուղեցույցներ, դասագրքեր,

1.3.3. Մշակել էլեկտրոնային ուսուցման (e-learning) դասընթաց և ապահովել դրա ներդրումն ու տարածումը,

1.3.4. Ստեղծել ՑՈՒ/ՄԿ ոլորտի գրադարանային ռեսուրսներ,

1.3.5. Աշխատանք տանել ՑՈՒ/ՄԿ ոլորտում գիտական խորհրդի ստեղծման ուղղությամբ,

1.3.6. Նախաձեռնել ՑՈՒ/ՄԿ ոլորտի մասնագետների պատրաստում և վերապատրաստում,

1.3.7. Նախաձեռնել հասարակական հավատարմագրման գործընթաց ՑՈՒ/ՄԿ ոլորտում:

**ՆՊԱՏԱԿ 2. ՀԿ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՒՄ ՑՈՒ/ՄԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆԸ**

**Խնդիր 2.1. Ամրապնդել կապերը շահագրգիռ կողմերի հետ.**

2.1.1. Հստակեցնել շահագրգիռ կողմերի ցանկը,

2.1.2. Վերանայել և վերլուծել ՀԿ առկա կապերը և համագործակցությունը,

2.1.3. Գտնել շահագրգիռ կողմերի հետ համագործակցության եզրեր,

2.1.4. Շահագրգիռ կողմերի հետ կնքվել համագործակցության համաձայնագրեր, հուշագրեր, պայմանագրեր:

**Խնդիր 2.2. Ստեղծել ՀԿ ռեսուրս-կենտրոն**

2.2.1. Մշակել ՀԿ Ռեսուրս-կենտրոնի հիմնադրման համար անհրաժեշտ թաստաթղթերը և գրանցել այն,

2.2.2. Համքագրել Ռեսուրս-կենտրոնի աշխատակազմը և վերապատրաստել այն,

2.2.3. Հայթայթել Ռեսուրս կենտրոնի ֆինանսավորման միջոցներ,

2.2.4. Ռեսուրս-կենտրոնի կայացման համար ապահովել ՀԿ անդամների ռեսուրսների լիարժեք օգտագործումը:

**Խնդիր 2.3. Բարձրացնել ՀԿ հեղինակությունը և զարգացնել նրա ներուժը.**

2.3.1. Իրականացնել ՀԿ ակտիվ PR գործունեություն՝ նոր անդամներ ներգրավելու նպատակով,

2.3.2. ՄԿ շաբաթները և ՑՈՒ/ՄԿ վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներն օգտագործել նաև ՀԿ վերաբերյալ քարոզչության իրականացման նպատակով,

2.3.3. Մշակել և իրականացնել ՀԿ անդամների թվի ավելացմանն ուղղված ծրագիր,

2.3.4. ՀԿ-ում ստեղծել սոցիալական ձեռներեցության համար հնարավորություններ,

2.3.5. Վերանայել ՀԿ իրավական-կազմակերպական ձևը՝ իրավաբանական անձանց միություն դառնալ ՀԿ գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով,

2.3.6. Մշակել և գործարկել ՀԿ գործունեության կանոնավոր մոնիթորինգի մեխանիզմ, երկամյա պարբերականությամբ վերլուծել և գնահատել ՀԿ գործունեությունը, մշակել արդյունքների բարելավմանն ուղղված առաջարկություններ,

2.3.7. Ապահովել ՀԿ մասնակցությունը Սոցիալական գործընկերության և մասնակցային գործընթացներում:

**ՆՊԱՏԱԿ 3. ՀԿ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՑՈՒ/ՄԿ ՈԼՈՐՏԻ ԱՅԼ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄ, ՆՐԱՆՑ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Խնդիր 3.1. Կազմակերպել ՀԿ անդամների կարողությունների զարգացմանը նպաստող միջոցառումներ.**

3.1.1. Կազմակերպում ՀԿ անդամների վերապատրաստման դասընթացներ,

3.1.2. ՀԿ ներսում ստեղծել ոլորտային աշխատանքային խմբեր, պլանավորել դրանց գործունեությունը,

3.1.3. Աջակցել ՀԿ անդամների և ՑՈՒ/ՄԿ ոլորտի այլ մասնագետների վերապատրաստմանը, որակավորման բարձրացմանը, վերաորակավորմանը, այդ թվում՝ գործուղումների միջոցով,

3.1.4. Խորհրդատվություն և տեղեկատվություն տրամադրել ՀԿ անդամներին և ՑՈՒ/ՄԿ ոլորտի այլ գործիչներին:

3.1.5. Կազմակերպել ճանաչողական բնույթի այցելություններ տարբեր կազմակերպություններ՝ արտադրական ձեռնարկություններ, ուսումնական մշակութային և գիտական հաստատություններ և այլն,

3.1.6. ՀԿ անդամների համար կազմակերպել առողջ ապրելակերպի ձևավորմանն ուղղված միջոցառումներ,

3.1.7. ՑՈՒ/ՄԿ ոլորտի մասնագետների որակավորման համակարգի ձևավորում և ներդրում,

3.1.8. Ասոցիացիայի ճանաչողական, մշակութային, տեղեկատվական միջոցառումներին ապահովել Ասոցիացիայի շահառուների, պոտենցիալ և/կամ ռեալ համագործակից կազմակերպությունների ու անհատների անմիջական մասնակցությունը:

3.1.9. Կազմակերպել ՑՈՒ/ՄԿ ոլորտում փորձի փոխանակման միջոցառումներ ՀԿ անդամների և բնագավառի այլ դերակատարների համար,

3.1.10. Մշակել ՀԿ անդամների կարողությունների գնահատման մեթոդիկա, բացահայտել նրանց կարողությունների զարգացման կարիքները,

3.1.11. ՀԿ անդամների թիմային ոգին ամուր պահելու նպատակով կազմակերպել մերձեցման (սոցիալականացման) միջոցառումներ:

**Խնդիր 3.2. Պաշտպանել ՀԿ անդամների մասնագիտական, գործաբանական, գործարարական շահերը.**

3.2.1. Ներկայացնել ՀԿ անդամների շահերը և կազմակերպել դրանց պաշտպանությունը պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում, ոչ պետական կազմակերպություններում, դատական ատյաններում, ինչպես նաև` արտերկրում,

3.2.2. Ձևավորել ՀԿ անդամների շահերի և իրավունքների պաշտպանի ինստիտուտ,

3.2.3. Մշակել ՀԿ և ՀԿ անդամի վարքագծի կանոնակարգ,

3.2.4. Վերանայել ՀԿ կանոնադրությունը,

3.2.5. Մշակել ու ներդնել ՀԿ անդամների առաջարկությունների և բողոքների գրանցման ու հաշվառման մեխանիզմ,

3.2.6. Ստեղծել դրամագլուխ` ՀԿ անդամների շահերի պաշտպանության համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար:

**Խնդիր 3.3. Ապահովել ՀԿ արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ.**

3.3.1. Մշակել միջոցների հայթայթման (Fund Raising) պլան, հետևողականորեն մասնակցել դոնոր և այլ կազմակերպությունների կողմից հայտարարված` դրամաշնորհների տրամադրման և ծառայությունների գնման մրցույթներին,

3.3.2. Ներդնել վճարովի ծառայությունների մատուցման մեխանիզմներ,

3.3.3. Խիստ հսկողություն իրականացնել անդամավճարների` ժամանակին և սահմանված չափով հավաքագրման նկատմամբ,

3.3.4. Կազմակերպել և/կամ մասնակցել համապատասխան ցուցահանդեսների, տոնավաճառների և այլ նմանատիպ միջոցառումների,

3.3.5. Ակտիվորեն որոնել հովանավորների և խթանել նրանց կողմից ներդրումների և նվիրատվությունների տրամադրումը ՀԿ-ին:

## ՆՊԱՏԱԿ 4. ՄԿ ՈԼՈՐՏԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

**Խնդիր 4.1. Աջակցել ՅՈՒ/ՄԿ ոլորտի կադրերի պատրաստման համակարգի ստեղծմանը**

4.1.1. Ուսումնասիրել ՅՈՒ/ՄԿ ոլորտի կադրերի պատրաստման միջազգային փորձը և առաջարկություններ մշակել դրա տեղայնացման ուղղությամբ,

4.1.2. Աջակցել միջին և բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում ՅՈՒ/ՄԿ ոլորտին վերաբերող մասնագիտությունների (ինժեներ անդրագոգ, մենեջեր անդրագոգ, քաղծառայող անդրագոգ) ներդրմանը,

4.1.3. Աջակցել նոր մասնագիտությունների չափորոշիչների, ուսումնական պլանների և ծրագրերի մշակմանը,

4.1.4. Աջակցել օտարերկրյա մասնագետների ներգրավմանը Հայաստանում ՅՈՒ/ՄԿ ոլորտի կադրերի պատրաստման գործում,

4.1.5. Աջակցել ՑՈՒ/ՄԿ ոլորտի կադրերի պատրաստման բնագավառում միջպետական համաձայնագրերի կնքմանը,
4.1.6. Նպաստել զբաղմունքների դասակարգչում ՑՈՒ/ՄԿ ոլորի մասնագետների գործունեության համապատասխան զբաղմունքների ընդգրկմանը,
4.1.7. Աջակցել ՑՈՒ/ՄԿ ոլորտի կադրերի պատրաստմանն ուղղված մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

**Խնդիր 4.2. Աջակցել ՑՈՒ/ՄԿ ոլորտի գիտական կադրերի պատրաստման գիտական հետազոտությունների համակարգի ստեղծմանը**

4.2.1. Գնահատել ՑՈՒ/ՄԿ ոլորտի մարդկային ռեսուրսները,
4.2.2. Նպաստել ՑՈՒ/ՄԿ ազգային ինստիտուտի ստեղծմանը,
4.2.3. Նպաստել պետական բուհերում ՑՈՒ/ՄԿ ամբիոնների ստեղծմանը և ասպիրանտական ու հայցորդական տեղերի տրամադրմանը,
4.2.4. Կրթաթոշակներ սահմանել ոլորտի ուսանողների, ասպիրանտների և հայցորդների համար,
4.2.5. Դրամաշնորհներ հայթայթել ՑՈՒ/ՄԿ ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար:

## ՆՊԱՏԱԿ 5. ՀԿ ԻՆՏԵԳՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻՆ և ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

**Խնդիր 5.1. Ամրապնդել միջազգային համագործակցությունը.**

5.1.1. Խորացնել համագործակցությունը EAEA-ի հետ, մասնավորապես վերջինիս Խորհրդի կազմում ներկայացված լինելու միջոցով,
5.1.2. Ընդգրկվել նոր միջազգային ցանցերի մեջ և խորացնել հետադարձ կապը եղածների հետ (ICAE, NILE, Inwent և այլն)
5.1.3. Համագործակցություն հաստատել առանձին, մասնավորապես` ԱՊՀ երկրների համապատասխան միությունների հետ,
5.1.4. Մասնակցել միջազգային հանդիպումների, խորհրդաժողովների և այլ կարևոր միջոցառումների,
5.1.5. ՀԿ պարբերականը հասու դարձնել տարածաշրջանում և Եվրոպայում,
5.1.6. Ներգրավվել եվրոպական GRUNDTVIG ծրագրերում` գործընկեր կազմակերպության կարգավիճակով.

- Բալթյան երկրներ
- Արևելյան Եվրոպա

5.1.7. Ակտիվացնել համագործակցությունը “3+3” (Բալթյան և Հարավ Կովկասյան երկրներ) պայմանագրով,

**Խնդիր 5.2. Ամրապնդել ներքին համագործակցությունը.**

5.2.1. Ամրապնդել կապերը պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ պետական, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, գործատուների և գործարարների, արհմիությունների և այլ գործընկերների հնարավոր լայն շրջանակի հետ,
5.2.2. Համատեղ ծրագրերի իրականացման նպատակով համագործակցություն հաստատել ուսումնական, գիտական, մշակութային, մարզական, առողջապահական և այլ նմանատիպ պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ,

5.2.3. ՀԿ մասնաճյուղեր (իրենց ռեսուրս կենտրոններով) ստեղծել ՀՀ բոլոր մարզերում,

5.2.4. Աջակցել ԼՂՀ-ում ՑՈՒ/ՄԿ ասոցիացիայի ստեղծմանը,

5.2.5. Տեղեկացված լինել ՀՀ-ում գործող բոլոր միջազգային կոնվենցիաների իրագործման վերաբերյալ, քանի որ գրեթե բոլորը դրանցից ունեն կրթական բաղադրիչ: